PEARLS
OF ARMENIAN HERITAGE

Հիսնակի Պահք

Սուրբ Ծննդյան տոնից առաջ հիսնակաց պահքն է, դրանից առաջ՝ Բարեկենդանը: Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու ծիսակարգում տարվա մոտ կեսը պահոց օրերն են՝ բաժանված օրապահքերի, շաբաթապահքերի եւ Քառասնօրյա կամ Մեծ Պահքի, նախատեսված ապաշխարության համար: Ըստ առաքելական կանոնի՝ յուրքանչյուր չորեքշաբթի եւ ուրբաթ, բացառությամբ Ս. Զատկից մինչեւ Համբարձում ընկած չորեքշաբթի եւ ուրբաթ օրերի, օրապահքեր են: Չորեքշաբթի պահք ենք պահում ի հիշատակ Քրիստոսի մատնության, իսկ ուրբաթ՝ ի հիշատակ նրա խաչելութեան: Շաբաթապահք է կոչվում, քանի որ տեւում է մեկ շաբաթ՝ երկուշաբթիից մինչեւ ուրբաթ: Այն նախորդում է եկեղեցական որոշ մեծ տոների՝ ինչպիսիք են Վարդավառի տոնը, Վերափոխման տոնը, Խաչվերացը, Վարագա Սուրբ խաչի տոնը եւ այլ տոներ:

Ինչպես այսօր Քառասնօրյա կամ Մեծ Պահքի շրջանն ընդգրկում է Սուրբ Հարության տոնին նախորդող քառասուն օրերը, այնպես էլ քրիստոնեության վաղ շրջանում Սուրբ Ծննդյան տոնի համար նույնպես սահմանված էր պահքի երկարատեւ շրջան, որը տեւում էր հիսուն օր: Այդ շրջանը կոչվում էր հիսնակ եւ սկսվում էր Սուրբ Ծննդյան տոնին նախորդող 50-րդ օրվա մերձավոր երկուշաբթի օրը: Այժմ հիսունօրյա այդ շրջանը բաժանված է երեք շաբաթապահքերի՝ երկշաբաթյա ընդմիջումներով միմյանցից առանձնացված:

Պահքերին նախորդող կիրակի օրերը կոչվում են բարեկենդան, որը նշանակում է բարի կենդանություն:

Image from www.orthodoxmonasteryicons.com